

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՅՐԵՐԸ

Նոր ժամանակներում Հայոց պետականության ձևավորման և զարգացման ողջ գործընթացի հիմնաքարը դարձած Հայաստանի առաջին Հանրապետությունը պատմական դեպքերի պատահական զուգադիպության արդյունք չէր: Ընդհակառակը, այս հրաշամանուկի ծնունդը սեփական ճակատագրի հանդեպ մեր ժողովրդի հաղթանակի վկայությունն էր: Ճակատագրի, որն այդքան դաժան էր գտնվել Մեծ եղեռնից հետո Արևմտյան Հայաստանի ավերակ շենքերում կրկին բնավորվող հայության հանդեպ՝ նրան կանգնեցնելով 1917թ. Հոկտեմբերյան հեղաշրջման և ռուսական բանակի Կովկասյան ճակատի փլուզման նոր արհավիրքի առաջ:

1918 թվականին ի վերջո անօրինակ սխրանքի վերածված՝ հայ ազգային-ազատագրական պայքարը, անշուշտ, ունեցավ իր անկման ու վերելքի հանգրվանները: Այն ամենն էլ չսահմանափակվեց Արևելյան Հայաստանի մի փոքր հատվածում տեղի ունեցած Մայիսյան հերոսամարտերով, այլ սկիզբ առնելով Երզնկայի 1918թ. փետրվարյան նահանջից, շարունակվեց մինչև 1918. սեպտեմբերի 15-ին ավարտված Բաքվի հերոսամարտը, որից հետո Առաջին աշխարհամարտի ավարտին մնացել էր ընդամենը 1,5 ամիս...:

Այսպիսով, պատմության մեջ առաջին անգամ արձանագրվեց հիրավի եզակի մի իրադարձություն. աշխարհի հզորների կողմից լքված ժողովրդի մաքառումները դանդաղեցրին և ի վերջո կասեցրին նրա դեմ իր բանակները նետած մի ողջ կայսրության ցեղասպանական ծրագրերի վերջնական իրագործումը: Արդյունքում՝ իր քանակին համեմատ ո՛չ մի ժողովուրդ այդքան զոհեր չտվեց՝ ինքնիշխան երկիր ունենալու սրբազան իրավունքը նվաճելու համար, որքան հայությունը: Բայց միաժամանակ՝ աշխարհում և ո՛չ մի երկիր հետագայում այնքա՛ն անտարբեր չգտնվեց

* «Վեմ»-ի «Հիշողություն» բաժինը պարզապես անցյալի դեպքերի ու դեմքերի ներկայացման հնարավորություն չէ, այլ նրանցով խորհրդանշվող՝ ազգի նվիրական (սակրալ) հիշողությունը վառ պահելու նպատակադրում: Վերջին տարիներին մեզանում նկատվող ազգային արժեքների նահանջի պայմաններում գիտության ու արդիականության հատման հանգուցակետում գտնվող այս առաջադրանքի իրականացումը դարձել է հրատապ անհրաժեշտություն: *Խմբ.*

2009
ապրիլ-հունիս
թիվ 1(26)

համահայկական համրես

Վեմ

նահատակությամբ իր գոյությունն ապահոված պետության հիմնադիր-հայրերի ու հազարավոր անանուն մարտիկների հիշատակի հանդեպ, որքան Հայաստանը: Եվ եթե խորհրդային շրջանում դա հասկանալի էր, քանի որ երկիրն անկախ չէր, ապա երրորդ հանրապետության օրոք՝ անբացատրելի է ու խիստ տարօրինակ:

Իրենց հարզող բոլոր ազգերը, այդ թվում՝ աշխարհի հզորագույն տերությունները, մեծագույն ակնածանքով են վերաբերվում սեփական երկրի անկախության հիմքերը դրած պետության հիմնադիր հայրերի հիշատակի հանդեպ: Քանզի փոխվում են վարչակարգերն ու կառավարման ձևերը, բայց պետության հիմնադիր հայրերի կողմից խորհրդանշվող՝ իբրև անկախ ու ինքնիշխան ազգ ապրելու գաղափար-նպատակի պաշտամունքը մնում է անփոփոխ: Անգամ Ամերիկայի Միացյալ Նահանգների նման հզորագույն երկիրը, որի անկախությանը ոչ ոք չի սպառնում, այսօր չի պատկերացնում իր գոյությունը առանց Ջ. Վաշինգտոնի, Թ. Ջեֆերսոնի և պետության մյուս հիմնադիր-հայրերի ռազմական, քաղաքական ու մտավոր սխրանքների:

Թերևս աշխարհում միակ «բացառիկ» երկիրը, որն իր անկախության վերականգնումից հետո էլ շարունակում է խուսափել պետության հիմնադիր հայրերի գոյության փաստի պաշտոնական ճանաչումից և նրանց համարում է սոսկ Առաջին Հանրապետության հիմնադիրներ, Հայաստանի երրորդ Հանրապետությունն է: Ժամանակը ցույց կտա, թե ի՞նչ է թաքնված այս ամենի հետևում՝ խորհրդային մտածելակե՞րպը, նեղկուսակցական անհանդուրժողականությունը, թե՞ Հայաստանի անկախության փաստը կասկածի տակ դնելու վտանգավոր մտասևեռումը: Բոլոր դեպքերում, փաստը մնում է փաստ, որ Հայաստանի Հանրապետությունն ունի իր հիմնադիր հայրերը, որոնք՝ որպես այդպիսիք, պաշտոնապես դեռևս չեն ճանաչվել նույն Հայաստանի Հանրապետության կողմից: Նրանց գործի մեծությունը գնահատելու անհրաժեշտությունը սեփական հայրենիքում մեր ժողովրդի՝ դարերով ստեղծած պետաքաղաքական ավանդույթների շարունակականության ու ժառանգորդականության ապահովման հիմնական պայմանն է: Առանց դրա ուղղակի հնարավոր չէ մոտենալ մեր գոյության հիմքերին և առաջ շարժվել՝ հենվելով դրանց վրա:

Պատմական ճշմարտությունը պահանջում է արձանագրել, որ 1918 թվականի փետրվար-սեպտեմբերյան անօրինակ հերոսամարտերի միջոցով Հայոց պետականության հիմքերը դրած քաղաքական ու ռազմական բազմաթիվ գործիչների շարքում առանձնանում են երկու վառ անհատականություններ, որոնք առաջնորդելով մի ողջ կայսրության դեմ մաքառող հայ ժողովրդի օրհասական կռիվը, հիմնեցին և պաշտպանեցին Հայաստանի Հանրապետությունը՝ ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը:

Նրանցից առաջինը Հայկական կորպուսի կամագուրկ նահանջը գործի ու ժողովրդի Մայիսյան հերոսական հակահարվածին փոխակերպելու գործի քաղաքական ղեկավար և առաջնորդ, Երևանի դիկտատոր Արամ Մանուկյանն է: Երկրորդը 1918թ. հունիսի 4-ին Բաթումի պայմանագրով Օսմանյան կայսրության կողմից իբր թե ճանաչված, Հայաստանի նորանկախ հանրապետության վերջնական հռչատումը կանխելու նպատակով կազմակերպված և գրեթե մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը տևած Բաքվի անօրինակ հերոսամարտի առաջնորդ Ռոստոմն է (Ստեփան Ջորյան):

Չճանաչելով այս երկու վառ անհատականությունների՝ 1918 թվականին կատարած սխրանքի խորհուրդն ու արժեքը, ժամանակի ընթացքում կարող ենք կասկածի տակ դնել նաև անկախ պետականություն ունենալու իմաստն ու նշանակությունը: Սեփական պետության հիմնադիր հայրերի գոյության փաստն անտեսող պետաքաղաքական համակարգը հավերժական որբի կարգավիճակի է դատապարտում ոչ միայն իրեն, այլև իր կողմից դաստիարակվող սերունդներին:

Արամ Մանուկյանի և Ռոստոմի գործի ու սխրանքի մեծությունը ցույց տվող առաջին հրապարակումներից հետո, «Վէմ»-ը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության հիմնադիր հայրերի հիշատակը ըստ արժանվույն գնահատելու հարցը դարձնել ավելի լայն քննարկումների առարկա:

Խմբ.

THE FOUNDING FATHERS OF REPUBLIC OF ARMENIA

Editorial